Արձանագրություն N 3

Նոր Նորք վարչական շրջանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.03.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչատրյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գասպարյան /գնահատող/, Ա. Մինասյան /գնահատող/, Հ. Մարտիրոսյան /բացող/, Ա. Կարապետյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերում առկա անխամապատասխանության շտկման մասին

(Ա. Խաչատրյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

- «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը և մասնակցի հայտը գնահատվել է բավարար,

-«Սուրո Օսկանի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը: Համաձայն Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին

(Ա. Խաչատրյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ	Բավարար
«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ	Բավարար
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ	Բավարար
«ԱՔԱՐԱ» ՍՊԸ	Բավարար
«Սուրո Օսկանի» ՍՊԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Ա. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, երկրորդ տեղ՝ «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Խաչատրյան)

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Խաչատրյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 11.03.2019թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Ա. Խաչատրյան

Անդամներ՝ ..... Հ. Մարտիրոսյան

..... Ա. Կարապետյան

..... Ա. Գասպարյան

..... Ա. Մինասյան

Քարտուղար՝ ..... Ն. Կիրակոսյան